ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-068-18.10.2021-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**Հոդված 3**	Առաջարկվում է Նախագծի 3-րդ հոդվածով նախատեսված նորմը ձեւակերպել բավարար հստակությամբ՝ ընդգծելով Օրենսգրքի 374-րդ հոդվածով սահմանված դեպքում միայն տրանսֆերային գնագոյացման ճշտված հարկային հաշվարկի ներկայացման անհրաժեշտությունը:	Ընդունվել է: Նախագծի 3-րդ հոդվածը (Օրենսգրքի 54-րդ հոդվածի 1-ին մասը) խմբագրվել է հետևյալ կերպ. «Հարկ վճարողի (Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային գործակալի, հավատարմագրային կառավարչի, համատեղ գործունեության հաշվետու մասնակցի, կոմիսիոների, գործարքի իրականացման ժամանակ իր անունից հանդես եկող գործակալի, անչափահաս ֆիզիկական անձանց դեպքում՝ նաև ծնողի կամ խնամակալի) կողմից հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկում սխալների ինքնուրույն հայտնաբերման դեպքում կարող են ներկայացվել ճշտված հարկային հաշվարկներ: Տրանսֆերային գնագոյացման ճշտված հարկային հաշվարկներ կարող են ներկայացվել Օրենսգրքի 374-րդ հոդվածով սահմանված դեպքերում:»:	Ընդունվել է:
		Հոդված 14	Առաջարկվում է Նախագծի 14-րդ հոդվածով նախատեսված	Ընդունվել է: Նախագծի 14-րդ հոդվածում՝ (Օրենսգրքի 362-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ	Ընդունվել է:

			Օրենսգրքի 362-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված կարգավորումը տարածել նաև ռեզիդենտ անձանց նկատմամբ:	կետերում «ոչ ռեզիդենտ» բառերը փոխարինել «մյուս» բառով:	
		Նախագծի 13-րդ հոդված	Առաջարկվում է Նախագծի 13-րդ հոդվածով առաջարկվող՝ Հարկային օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի նոր շարադրանքը վերանայել:	Ընդունվել է: Նախագծի 13-րդ հոդվածով առաջարկվող՝ Հարկային օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ «**հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկիր (աշխարհագրական տարածք)՝** երկիր կամ աշխարհագրական տարածք, որտեղ սահմանված շահութահարկի դրույքաչափը չի գերազանցում 15 տոկոսը. » բառերը փոխարինվել է՝ «**հարկման հատուկ ազատական համակարգեր ունեցող երկիր (աշխարհագրական տարածք)՝** երկիր կամ աշխարհագրական տարածք, որտեղ՝ ա. գործում է շահութահարկի (համանման այլ հարկի) 10% տոկոս և ցածր դրույքաչափ կամ շահութահարկի ազատում. բ. ռեզիդենտ անձը տվյալ երկրի կամ աշխարհագրական տարածքի օրենսդրության համաձայն ազատված է կամ վճարում է 10 % տոկոսից ցածր դրույքաչափով շահութահարկ (համանման այլ հարկ): Սույն ենթակետում նշված դեպքում երկիրը կամ աշխարհագրական տարածքը համարվում է հարկման հատուկ ազատական համակարգ ունեցող երկիր կամ աշխարհագրական տարածք՝ միայն սույն	Ընդունվել է:

				ենթակետում նշված անձանց մասով:	